«Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆ ԱՂԱՍԻ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ

Հոկտեմբերի 9-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ շքանշանի հանձնման հանդիսավոր արարողություն: Ամենայն Հայոց Հայրապետը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» պատվո բարձր շքանշանով պարգևատրեց արձակագիր, հրապարակախոս Աղասի Այվազյանին՝ ծննդյան 80-րդ տարեդարձի առիթով, հայ ժողովրդին ու Հայրենիքին մատուցած ծառայությունների ու վաստակի համար:

Արարողության սկզբում Ա. Այվազյանի՝ արվեստի տարբեր բնագավառներում ծավալած գործունեությանն ու մեծ վաստակին անդրադարձավ ՀՀ Գրողների միության նախագահ Լևոն Անանյանը: «Այս շքանշանը արժանի հատուցումն է այն ծառայության, որ Աղասի Այվազյանը մատուցել է մեր ժողովրդին»,- ասաց պրն Անանյանը՝ շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը պարգևի համար, անդրադառնալով նաև Մայր Աթոռի ու Գրողների միության միջև առկա սերտ համագործակցությանը:

Այնուհետև «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո ներս բերվեց Հայրապետական Սրբատառ Կոնդակը, որն ընթերցեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս. Խաչատրյանը (տե՛ս էջ 18):

Կոնդակի ընթերցումից հետո Ամենայն Հայոց Հայրապետը մեծարյալի կուրծքը զարդարեց «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» շքանշանով: «Ձեր օրհնությունը շատ մեծ նշանակություն ունի ինձ համար: Այս շքանշանի հանձնումը անակնկալ էր ինձ համար և մեծ պատիվ»,- հուզված ասաց պրն Այվազյանը՝ շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը բարձր պարգևի համար:

Իր Հայրապետական օրհնությունը ներկաներին ուղղեց նաև Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Նախախնամական ենք համարում, որ այս պարգևի հանձնումը կատարվում է այսօր, երբ տակավին ապրում ենք խորհուրդը մեր մեծ Թարգմանիչ Վարդապետների, որոնց տոնը մենք տոնախմբեցինք երեկ: Այսօր Հայ Եկեղեցու մեծագույն սրբերի՝ Սուրբ Սահակի և Սուրբ Մեսրոպի շքանշանը զարդարում է Ձեր կուրծքը՝ ի գնահատություն Ձեր ծառայության, որ Դուք իրականացրել եք ազգային մեր կյանքում, մաշտոցյան գործը շարունակելով մեր ժողովրդի կյանքից ներս, կրթելով, սնելով, դաստիարակելով հայորդիների ներկա սերնդին Ձեր հոգու ազնիվ զգացումներով, Ձեր հայրենասիրությամբ, առ Հայրենին ունեցած բարի իղձերով, երազներով ու տեսիլքներով»,- նշեց Նորին Սրբությունը՝ մաղթելով Տիրոջ զորակցությունը վաստակաշատ գրողին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ